

Հայաստանի ոստիկանները
Մրուանի խալիֆայությունի մասնակ

Ժողովուրդը դադարի կերպով զինքը խալիֆա ճանչցաւ, ու նա եկաւ Միջագետքի զինուորներով: Հանդիպեցաւ Ուալիտ Իպն Ապլ Մէլիքի երկու որդիներուն՝ Պըշըրի եւ Մասրուրի, որոնք Հալէպի մէջ բանակած էին: Պարտութեան մատնեց անոնց երկու բանակները ու զանոնք դերեց: Յետոյ դնաց հասաւ մինչեւ Հոմս, որուն վերայ կ'իջնէր Ապտիւլ Ազիզ: Իպրահիմ լուրը առնելուն՝ անոր դէմ զրկեց Սիւլէյման Իպն Հիշամ Իպն Ապտիւլ Մէլիքը, որ հանդիպեցաւ Մրուանի եւ հետը եղող Միջագետքիներուն, Գեննեսերինցիներուն եւ Հոմսցիներուն: Բախումը տեղի ունեցաւ Այն էլ-ճարի (Այն ճար) մօտ՝ Դամասկոսի նահանգին մէջ: Պատերազմը սկսաւ չորեքշաբթի օրը, 7 Սէֆէր 127ին (Նոյեմբեր, 744), ու իրարմէ բաժնուեցան: Յաջորդ օրը պարտուեցաւ Սիւլէյման Իպն Հիշամ ու անոր ընկերները, որոնք դիմեցին Իպրահիմի: Այն ատեն Մրուան եկաւ Ալէյի վանքը, եւ Դամասկոսցիները զինքը խալիֆա ճանչցան: Մտաւ քաղաքը եւ Իպրահիմ զինքը պաշտօնանկ հռչակեց ու Մրուանը խալիֆա ճանչցաւ, երկուշաբթի օրը Սէֆէր ամսոյն կիսուն, 127ին (Նոյեմբեր, 744): Շարունակեց մնալ Մրուանի հետ, մինչեւ որ խեղդուեցաւ Ջապ⁽²³⁾ զեռին մէջ, Ապտուլլա Իպն Ալիի դէմ ճակատամարտի ժամանակ⁽²⁴⁾:

Եագուպի, Բ. 403

Բնագրէն քարգմանեց
Հ. Օ. ԱԴԱՄԵԱՆ

Եագուպի, Բ. 404-405

(23) Ջապ զեռը կը գտնուի Իրաքի մէջ եւ Տիգրիսի մէջ ճիւղն է:

(24) Ղեւոնդ, զլ. ԻԴ. էջ 116-118: Վարդան, ԼԹ. էջ 74, 75:

ԱՐԱԲԿԵՐ ԵՒ ԻՐ ԲԱՐՔԵՐԸ

(Շար. տե'ս Բազմ. 1957, Թ. 7-8, էջ 160)

ԳԼՈՒԽ Ե.

ՋԵՐՄԵՌԱՆԴ ՈՒ ԲԱՐԵԿԻՐԹ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՐՔԵՐ

1. - ԳԻՒՏ ԽԱԶ

Գիւտ Խաչին՝ «Վեմ իսալ» կ'ըսէ Արարիկերցին, Պէշիկըն ա'լ իջէրի դաշ: Ստուգիլ ցուրտը կը կոխէ եւ կարելի է ըլլար այլեւս դուրսը մնալ: Գիւղերէն կը վերադառնան տուն, այգիներէն կը հրաժարին, տանիքներու վրայ չեն գիշերեր, ցուիքներու վրայ չարուած պատեղներու, ազատքեղի, ոահաններու, անանուխներու, վարունգի, սմբուկի... սմբած ու դեղնած ածուֆները կը պարպեն եւ տուփերը մահաւոր մէջ կ'ամփոփեն որ չփոխեն եւ դարնան տնկադործութեան պատրաստ ըլլան: Որովհետեւ այս առձեռն մշակուած համեմունքները տանտիկնոջ խոհանոցին պատրաստ հարստութիւններն են՝ դարունէն մինչեւ աշուն:

2. - ԱՍՏՈՒԱՄԱՅԱՅՏՏՈՒԹԻՒՆ

Եւ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Արարիկերու Ժողովուրդը ջերմեռանդութեամբ կը տօնէ ասոնք. բքարեր հովերն ու ցուրտն ալ կ'արհամարհէ եւ չարան ու խեղդեցի կը յաճախէ մօտ ու հեռաւոր թաղերէ՝ մուշտակներու եւ թուրդեղեխներու մէջ փաթթուած, իր սրտաբուխ աղօթքներն ընելու, խոստովանանք ըլլալով Ս. Հաղորդութիւն առնելու Ջալաւոր պատարագի ժամանակ, «Որհնուրդ

մեծ եւ սքանչելի» լսելու համար: Վերադարձին մաս եւ օրհնուած ջուր բերելով նաեւ այն տնեցիներուն՝ որոնք ծերութեան եւ հիւանդութեան պատճառով չեն կրցած եկեղեցի երթալ:

3. - ԱՄԱՆՈՐ ԿԱՄ ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր տարւոյ նախորդ գիշերը, տանտիկնոջ շատ պատրաստութիւններ ունի կատարելիք՝ փոքր մանչաղջիկներուն ուրախութիւն պատճառելու համար:

Երբ երեկոյան ընթրիքը կ'աւարտի, մեծերը սուրճի կը նստին, հին տարւոյն յաջող կամ անյաջող դէպքերուն վրայ կը խօսակցին, փոքրիկներուն կը յիշեցնեն իրենց անցուցած բարի կամ չար, աշխատասէր եւ ծոյլ ընթացքը եւ կը յորդորեն որ այնուհետեւ պէտք են այլեւս բարի, ջանասէր եւ հնազանդ ըլլալ, որովհետեւ տարի մըն ալ մեծցան, հետեւաբար աւելի սիրով եւ եռանդով եկեղեցի եւ դպրոց պիտի յաճախեն, զգեստները, դրքերը, տետրակները մաքուր պիտի պահեն, խելօք պիտի ըլլան եւ այլն, որպէսզի վաղը որ Նոր տարի է՝ Կապանդ Պապան իրենց աղուոր բաներ կախէ բխրիկէն (ծխան) վար, ապա թէ ոչ կը զրկուին: Անոնք որ այս իրիկուրնէ կը սկսին խելօք, բարի եւ հնազանդ ըլլալ, պէտք է չուտով երեսնին խաչակնքեն ու անկողին մտնելով՝ քնանան: Տղաք՝ խոստովանելէն ուրախացած չուտով անկողին կը մտնեն ու կը քնանան, հաւատալով անմեղութեամբ բոլոր

պատմութեանը: Երջանիկ մանկութիւն:

Տանտիկինը տոպրակներուն մէջ կը լինէր տղայոց ախորժած բաները. չամիչ, ընկոյզ, լէպլէպի, շաքար, փուշատի խնձոր, կաղին, նուշ... դարձեալ խաղալիքներ, պուպիկներ, կառքեր, զնդակներ, փոքր ատրճանակներ, ձիեր... ծրարով մը նոր զգեստեղէն, կօշիկ, գլխարկ, ժանեակ, ասղարան, դերձան, դուրպայ հիւսելու շիշեր, հարդուկ, փոքր մկրատ... և կը կախէ բոլորը բուխերիկէն վար:

Առտուն կանուխ արթնցող մանուկներէն ոմանք կը տեսնեն տոպրակները և ուրախ ծափերով կը պոռան. «Մայրիկ, Կաղանդ Պապան եկեր կախեր է. ինքն ալ բուխերիկին դուխը նստած՝ կը սպասէ (մանկական անմեղ երեւակայութիւն): Այս աղմուկէն ամէնքն ալ կ'արթնան, կը հաղուին, կը լուսացուն և նախաճաշի կը նստին: Տղոց ո'չ մէկը ախորժակ ունի, աչքերնին բուխերիկին վրայ է:

Մեծ հայրիկը. — Զըլլա՛յ թէ երթաք դպիշք տոպրակներուն, չէ նէ Կաղանդ Պապան կ'առնէ կը տանի՛...:

Արգար. — Շուշան, հո'ս եկուր, նայէ ինչ կ'ըսէ մեծ հայրիկը:

Շուշան. — Ան ինծի համար չ'ըսեր, ևս մեծ եմ, տղոց կ'ըսէ:

Վրոյր. — Զգուշացու՛ր Յովսէփիկը, թէ և խելօք է, տեղէն չի շարժիր, պիտի որ Կաղանդ Պապան բարի տղաքները կը սիրէ և կը վարձատրէ: Անուշիկ դառնուկս (կը գգուէ ու կը համբուրէ):

Այս վայրկեանիս, տնեցիներէն լեզուանի մէկը Կաղանդ Պապա ձեռացած ներս կը մտնէ՝ կէս մը կուզ, կոնակը տոպրակ մը շալկած, ձեռքին մէջ հաստ գաւազան մը բռնած, չորորտով և ասդին անդին նախելով... «Շնորհաւոր Նոր տարի» կը մաղթէ:

Ամէնքը միաբերան. — «Հետդ բերես նոր բարի» բարի եկար, հրամէ՛:

Կաղանդ Պապա. — Այս ի՞նչ սիրուն գաւազաններ... մանչուկներ, աղջիկներ:

Մեծ մայրիկ, ևս հեռու, հեռու տեղերէ կու գամ. կոնակս նուէրներով լեցուն է. բուխերիկէն լեցուն տոպրակներ կախեցի այս գիշեր, շատ գեղեցիկ բաներ կան խելօքիկ, աղուորիկ պղտիկներու համար (քովերին մօտենալով և մանչուկի մը հարցնելով). Անունդ ի՞նչ է, որո՞ւն տըղան ևս:

Հրաչիկ. — Ատաշիկ Փափաղեան, հայրիկիս ու մայրիկիս տղան եմ (խնդում):

Կաղանդ Պապա. — Քու անո՞ւնդ, աղջիկս:

Տիրուհի Ժիւլիէթ. — Տիրուհի Ժիւլիէթ է, ևս խելօք եմ:

Կաղանդ Պապա. — Քու անո՞ւնդ, մանչո՛ւկս:

Յովսէփիկ. — Ես քու մանչուկդ չե՛մ, հայրիկիս ու մայրիկիս մանչուկն եմ և անունս Յովսէփիկ Փափաղեան է. բայց քեզ ալ կը սիրեմ:

Կաղանդ Պապա. — Շա՛տ լաւ, շատ խելացի պատասխան տուիր, Յովսէփիկ: Շուշան մայրիկ, Արշալոյս մայրիկ, այս գաւազանները բոլոր տարին միշտ խելօք կեցա՞ն, սիրով դպրոց դացի՞ն, սորվեցա՞ն, դրել կարդալ գիտե՞ն. ձեռագործներ ըրի՞ն. ամէն առտու իրիկուն երեսին կը խաչակնքէի՞ն. «Հայր մեր» սորվա՞ծ են և սեղանի վրայ կ'ըսե՞ն...:

Շուշան-Արշալոյս. — Այո՛, Կաղանդ Պապա, այո՛:

Կաղանդ Պապա. — Շա՛տ ուրախ եմ, շա՛տ գոհ եմ. ուրեմն արժանի են բերած նուէրներուս. (տոպրակը վար կ'առնէ, կը բանայ և բաժնեկտմով). Ա՛ռ, Հրաչիկ, քեզի աղուոր պատկերադարձ գիրք մը որ կարդաս, և անոյ զտուղներ, Տոպրակ է այսօր:

Ա՛ռ, Տիրուհիկ, քեզի ալ աղուոր պուպիկ մը, ասեղ, դերձան և մկրատիկ մը որ գեղեցիկ զգեստներ կարես ու հագցնես և անոյ զտուղներ:

Ա՛ռ, Յովսէփիկ, քեզի ալ, որ դեռ պըղտիկ ևս, ձիով կառք մը, որպէսզի Տիրուհիին պուպիկը պտոյտի տանիս և նոյն-

պէս անոյ զտուղներ: (Այս պահուս փոքրիկները վեր վեր կը ցատկեն): Համբերեցէ՛ք, դեռ ձեզի ուրիշ շատ գեղեցիկ հագուելիքներ ալ բերած եմ: Բայց նախ կ'ուզեմ հարցնել թէ ուրիշ պէպէ՛ք չունի՞ք:

Մաննիկ. — Այո՛, Կաղանդ Պապա, Աշխէնիկ մ'ալ ունինք որ հոն պահուած է քեզմէ վախճալով:

Կաղանդ Պապա. — Ինչո՞ւ կը վախճայ, չա՛ր եղած է: Մի՛ վախճար աղջիկս, հո'ս քովս եկուր. (Աշխէն դողդողալով և վախճալով կը մօտենայ): Աչքերդ ու մազերդ հոտուրտալով (կը դորձադէ) կը հասկընամ թէ երբեմն չարութիւն ըրած ես, անհնազանդ եղած ես մայրիկդ հրամաններուն...: Բայց քանի որ հիմա աչքերդ արցունքով լեցուած են, ըսել է թէ զղջած ես և ասկից վերջ բարի, հնազանդ պիտի ըլլաս, այնպէս չէ՞:

Աշխէնիկ (լալով). — Այո՛, Կաղանդ Պապա, ա՛լ չար պիտի չըլլամ, բարի պիտի ըլլամ. ինծի՛ ալ նուէր տուր:

Կաղանդ Պապա. — Ապրի՛ս, ուրեմն, այս առաջին անգամս կը ներեմ և քեզի ալ աղուորիկ կատու մը կը նուիրեմ և առնոյ զտուղներ կու տամ. ա՛ռ, պայմանով որ երբ դալ տարի նորէն դամ, դո՛ւ վեստներ չեսմ:

Բոլոր տղաք. — Կաղանդ Պապա, մի՛ երթաք, միշտ մեր քով կեցէ՛ք:

Կաղանդ Պապա. — Զէ՛, ձագուկներս, չ'ըլլար... ուրիշ տուններ ալ պիտի այցելեմ և առաքինի մանչ-աղջիկները պիտի վարձատրեմ, իսկ չարերը պիտի պատժեմ այս հաստ գաւազանովս (ցոյց տալով և գետինները զարնելով): Հասկցա՞ք: Յետոյ 12 ամիս պիտի պտտիմ աշխարհիս վրայ, որպէսզի դալ տարուան համար ձեզի նոր նուէրներ հաւաքեմ. այնպէս չէ՞:

Ամէնքը. — Այո՛, Կաղանդ Պապա, դացէք որ շուտ դառնաք. մենք խելօք պիտի կենանք:

Հրաչիկ. — Կաղանդ Պապա, ևս հեծելանիւ մը կ'ուզեմ:

Տիրուհի. — Ես ալ աղուոր քոյ մը կ'ու-

զեմ որ դուխս դնեմ և ժամ երթամ մայրիկիս հետ:

Յովսէփիկ. — Ես ալ Հրաչիկին պատկերադարձ գրքէն կ'ուզեմ:

Աշխէնիկ. — Ես ալ Տիրուհիին տուածիդ պէս պուպիկ մը, ասեղ, դերձան և մկրատիկ կ'ուզեմ որ ձեռագործներ աշխատիմ մայրիկիս քով...:

Կաղանդ Պապա. — Շա՛տ աղէկ, չա՛տ բարի, ատոնք բոլորն ալ դիւրին բաներ են և չեմ մոռնար: Հիմա, Շուշան և Արշալոյս մայրիկներ, աս տոպրակները վար առէք բուխերիկէն և մէջը եղած զգեստեղէնները հագուեցուցէք ամէնուն որ եկեղեցի երթան: Ես ալ ամէնուդ «մընաք բարով և շնորհաւոր Նոր տարի» կրկնելով կը մեկնիմ:

Տղաք եւ աղջիկներ (բարձրաճախ). — Երթա՛ք բարով, Կաղանդ Պապա:

4. — ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Տեսնենք դառաջը Տերմուտս կը կոչէ ժողովուրդը և ունի իր յատուկ սովորութիւնները, որ Հայոց հեթանոսական կրօնքէն մնացած է և Ս. Գրիգոր Լուսաւորիչ անոնց քրիստոնէական բնոյթ տուած է ի սկզբան չտիրեցնելու համար:

Նոյն օրը, երեկոյեան ժամերգութեան ժամանակ, դասին մէջ կամ դասէն դուրս սեղան մը կը դարդարուի մոմերով և մէջտեղ պղնձ պնակի մը մէջ բամպակ դնելով, վրան սալիքոյ կը լեցնեն ու կը վառեն, ի նշան քրիստոնէութիւն ընդունելուն և հին մեղքերն ու սովորութիւնները ջնջելու: «Զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ», այսինքն Հայ ժողովուրդը՝ հրեղէն լեզուօք լուսաւորուած: Եւ քահանաներն ու տիրացուները չորս կողմը դառնալով, Աւետարաններ կը կարդան ու կ'երգեն: Սովորութիւն կայ նաեւ եկեղեցւոյ բակին մէջտեղ փայտի դէզով խարոյկ վառել, և երիտասարդները բոցերու վրայէն կը ցատկեն. ո՛վ որ որեւէ վնաս չի կրեր՝ բախտաւոր կը համարուի:

Կէս դիւերին, քրիստոնեաներու շատ տանիքներու վրայ, երկայն ձողերու ծայրը կաշիներ կը վառեն եւ Մեռելոց կը պուռան, իբրեւ ննջեցեալներու հոգիներու մեղքերու քաւութեան համար:

5. - ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանական հանգիստը կը սկսի Մեծ պահքէն 15 օր առաջ: Ազգականներն իրարու տուն կը հրաւիրուին, միասին ուրախութեամբ անցընելու այդ երկու շաբաթները, ու դիւերները կը հաւաքուին նաեւ դրացիներ եւ բարեկամներ, եւ խրախմանութիւններ կը սարքեն աւանդական քէմէնչէ, սազ եւ տէֆով: Ասոնց կ'ընկերէ նաեւ զեղաձայն երիտասարդութիւնը, հայրենասիրական եւ զանազան պարերու երգերով. մերթ զաւելոյ աւանդական երկայնացումներ կ'ընեն, զէյպէկի խաղեր կը խաղան ու կը զուարճացնեն բազմութիւնը: «Թամզարամ»ը միակ նախասիրած եղանակն է ամէնուն, եւ զոյգ զոյգ կը հրաւիրուին պարելու, իսկ հանդիսատեսներ ծափերով ու կեցցէներով կը հրահրեն. խմբապար կը դառնան յատուկ սովորութիւններով ու շարժումներով, պարագլուխը ձեռքը սպիտակ թաշկինակ մը բռնած դէպի աջ կ'առաջնորդէ ոստումներով եւ գետնի տախտակամածը կը ճոնչէ ու տեղի կու տայ, օղիի շիշն ու դաւաթները վար կը թափին... Կիներն առանձին խումբ կազմած կը խօսակցին եւ չարածձի գաղափարներով, զանազան ծնողներու դրդումներով՝ չափահաս մանչեր ու աղջիկներ պարելու կը մղեն եւ խորամանկ աչքերով անոնց շարժումները կը քննեն ու ապագայ խնամութիւններու դռներ կը պատրաստեն: - Միւս կողմանէ, համեստութիւնը միշտ կ'իշխէ ամէնուն վրայ, եւ ընտանեկան մթնոլորտը վառ կը պահուի այդ մտերմիկ համախմբումներով ու պատուասիրութիւններով: - Երանի թէ միշտ այսպէս մնար ու ապրէր մեր հայ ժողովուրդը: Դժբախտաբար, քաղաքական

տխուր անցքերու պատճառաւ, հետզհետէ մոտաք զտաւ նորասիրութիւնն ու օտարասիրութիւնը՝ ներմուծելով թերութիւններ, որոնք խաթարեցին ու կը խաթարեն անզգալաբար մեր պապենական անմեղ ու երջանիկ կեանքը: - Բարեկենդանի կը յաջորդէ՝

6. - ՄԵՇ ՊԱՀՔ

Բուն Բարեկենդանի յաջորդող առաջին երկուշաբթին կը սկսի բնականոն կեանքը, ապաշխարութեան օրերը, որուն պատրաստութիւնները շատ մեծ եւ խիստ են Արարկերցի ընտանիքին քով, որովհետեւ խիստ կը պահէ նաեւ Մեծ պահքը:

Ուստի, առաջին օրէն կը լուսայ, կը մաքրէ տունը. նախորդ օրէն աւելցած ամէն տեսակ կերակուր, հաց, հացէ իւղոտ կարկանդակներ, մսեղէն եւ այլն, բոլոր թուրք աղքատներուն կը բաժնէ. միայն, պանիրի, դառութեան, կարագի, արդար իւղի բոլակներուն բերանները սէկերով կը փակէ եւ փոքր մանուկներուն կը պատուիրէ որ բնաւ չմօտենան անոնց, հաւատացընելով թէ Մեծ Պահք պապան վրանին նստած կը հսկէ մինչեւ Զատիկ, եւ քովը մօտեցողները սաստիկ կը պատժէ: Տղաք կը հաւատան եւ կը հրաժարին պահք ուտելէ: Լուսաւորչական հայոց քով արդիւնում է նաեւ ձուկ, ձէթ եւ ձիթապտուղ ուտել: Շատ հազուադէպ է նաեւ ծանր հիւանդներուն եւ ծերերուն իսկ բացառութիւն ընել:

Օրն ի բուն տուններէն աղմուկ կը լըսուին: Պոչոր կաթսաներու մէջ, եռացած մոխրաջրով կը խաչեն խոհանոցի պղնձէ անոթները, դանակ, դգալ, շերեփ, պատուաքաղ եւ այլն, որպէսզի բոլորովին ջնջուին ուտիքի հետքերն ու հոտերը. կը լուան բոլոր լաթեղէնները, սիւնոց, անձեռոց, դէհնէ (անոթները լուսուր լաթ մը), ձեռաց սրբիչ եւ սրբիչ լաթեր:

Մեծ պահք կերակրեղէնները շատ տեսակ են, եւ կը համեմունք միայն աղով, սոխով, սխտորով, ընկոյզով, դահինով,

նուշի, արեւածաղիկի, դգումի իւղերով եւ այլն: Պատրաստ ուտելիքներն են նաեւ դարունէն մինչեւ աշուն ամբարած իրերը, մեղր, թուրթի եւ խաղողի ուտանք, չոր թուրթ, ռէշէլ, փոխինդ, խաղողի պաստիս եւ ոտձիկ, թուրթի պաստիս եւն. եւն.:

Ծերունիները, պառանները ու կիներէն շատեր խիստ ծով կը պահեն եւ երեկոյեան ընթրիքին միայն կը ճաշեն. նոյնիսկ անապակ ջուր խմելու կը դուռնան. աղօթքներն են «Ընկալ քաղցրութեամբ» եւ «Որդի Աստուծոյ» Ս. Գրիգոր Նարեկացիին աղօթքները. նոյնպէս «Հաւատով խոստովանիմ», «Առաւօտ լուսոյ» եւ «Աշխարհ ամենայն» Ս. Ներսէս Շնորհալիի երգերը, զորս բոլոր դոց սորված կ'ըլլան: Առ հասարակ բոլոր հաւատացեալ ժողովուրդը ստէպ եկեղեցի կը յաճախէ, մասնաւորապէս չորեքշաբթի եւ ուրբաթ առաւօտ եւ երեկոյ՝ ժամերգութեանց ներկայ գտնուելու եւ Արեւադալի եւ միւս բոլոր մեծ պահքի յատուկ քաղցրաձայն եւ ոգեկեղի սովորութիւնն: - Զնայելով ո'չ արտակարգ ցուրտին, քամիին, սառոյցին եւ մեղրաչափի դիզուած ձիւնին, եկեղեցիի սառնապատ ցրտութեան, ուր ոտքի վրայ կանգուն կամ ծալապատիկ նստած ուշադրութեամբ կ'ունկընդրեն «Տէր ամենադուրս կ'ունկընդրեն» «Տէր ամենադուրս կ'ունկընդրեն»... եւ ուրիշ կալ»ը, «Նայեաց սիրով»ը... եւ ուրիշ ամէն երգեր ու աղօթքներ: Յետոյ տուն կը վերադառնան ամփոփ մտքով, հետի, զլխէն մինչեւ ոտքը ձիւնով ծածկուած

մաղ, ընչացք եւ մօրուք սառած: - Զիւնը, այո', Աստուծոյ հրաշագործ ձիւնը՝ որ Արարկերցիին կեանք եւ առողջութիւն կը պարզեւէ, եւ որուն մէջ կը տապալակի, կը վազվզէ մերկ ոտքով որպէսզի տանջող ձմեռնակը հակադէցութեամբ մեղմանայ: Այո', Արարկերցիին շատ կը սիրէ ձիւնը, կ'ուտէ զայն՝ արծարծուն տաք վառարանին առջեւ նստած: զգալով կ'ուտէ, ուտով, չամիչով կ'ուտէ որ ստամոքսը զօրանայ. կ'ուտէ, այո', բայց ո'չ թէ առաջին քեփ ձիւնը՝ որով միայն խաղողի պաստիսներն ու ոտձիկը կ'օժէ որպէսզի չչաքարոտին. այլ կ'ուտէ այն ձիւնը՝ որ արեւուն տակ անգամ մը հալած եւ յետոյ սառած, բիւրեղացած կը փայլի, բերին մէջ կ'երգէ կարծես եւ խըշտալով վար կը սահի կոկորդէն. կ'ուտէ մինչեւ Զատիկ կամ մինչեւ որ անհետ կ'ըլլայ դաշտերէն, պարտէզներէն եւ մերձակայ լեռներու եւ բլուրներու զառիթափներէն: Ծարաւը կը մարէ ձիւնով եւ տանիքներու ցուրիքներէն եւ ծառերու ձիւղերէն, մացառներէն կախուած թափանցիկ, մաքուր եւ սրածայր սառերով. եւ ըսել թէ ձիւնն սառը ուտելը վնասակար է, Արարկերցիին կ'արհամարհէ այս առասպելը, կը շարունակէ միշտ ուտել մինչեւ վերջին մնացորդները, կ'ուտէ տաք բաղնիքի մէջ, եւ կարմրեմ, կայտառ ու առողջ կը թեւակոխէ զարունը:

Հ. ԱԼԵԿՍԻՍ ՅՈՎՍԵՓԵԱՆ
(Շարունակելի)

